



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

«Այբ» դպրոց

Բաժին՝ Ակադեմիական մաս, ռուսերենի և այլ օտար լեզուների առարկայախումբ

Պաշտոն՝ ռուսերենի ուսուցիչ

Աշխատավայր՝ Թբիլիսյան խճ. 11/11, Երևան, Հայաստան

Աշխատանքը սկսելու ցանկալի ամսաթիվ՝ 2020 թ. սեպտեմբերի 1

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Այբ» դպրոցի ուսուցիչն ուսուցչությունը համարում է իր կոչումը, իսկ կրթությունը՝ ոչ միայն անձ ձևավորելու, այլև Հայաստանի ապագան կերտելու գրավական: Նա խորությամբ տիրապետում է իր առարկային և առարկայի դասավանդման յուրահատկություններին, ունի անհրաժեշտ մանկավարժական գիտելիքներ և հմտություններ, գիտի աշակերտի տարիքային առանձնահատկություններն ու հոգեբանությունը, հաջողությամբ օգտագործում է ՏՀՏ-ն դասավանդման մեջ: Ուսուցման ընթացքում կարողանում է խթանել աշակերտների սովորելու կարողություններն ու հմտությունները, հոգ տանում աշակերտների դաստիարակության, արժեհամակարգի ձևավորման մասին: Ուսուցչի նպատակն է հասկանալ յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները և տարբեր մոտեցումներ ու կրթական գործիքներ կիրառել աշակերտների ոգևորությունը, ուսումնական շահադրդվածությունը և սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար: «Այբ» դպրոցի ուսուցչից ակնկալվում է հանդես գալ որպես «Այբ» դպրոցի առաքելության կրող և աշխատել դպրոցի որդեգրած արժեքներին ու սկզբունքներին համապատասխան:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետևողականորեն նպաստել «Այբ» դպրոցի աշակերտի՝ որպես անհատի ձևավորմանն ու կերտմանը, նրա մեջ արժեքային համակարգի ձևավորմանը՝ հիմնվելով «Այբ»-ի աշակերտի նկարագրի սկզբունքների վրա
- Ստեղծել կրթական այնպիսի միջավայր, որտեղ ուսուցիչը կրթում ու դաստիարակում է աշակերտին սեփական արարքների օրինակով և վայելուչ պահվածքով
- Ցուցաբերել հոգածու վերաբերմունք աշակերտի նկատմամբ, ուշադիր լինել նրա պահվածքին ու կարգապահությանը, հոգ տանել նրա առողջության ու անվտանգության մասին
- Հարգել և պաշտպանել աշակերտի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը
- Բացահայտել, դիտարկել, հետազոտել և գնահատել աշակերտի ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները

- Չարգացնել աշակերտների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները
- Ուսուցանել՝ հաշվի առնելով աշակերտների կրթական կարիքները, տարիքային առանձնահատկությունները, առանձին աշակերտների ու աշակերտական խմբերի կարողություններն ու ձեռքբերումները
- Համագործակցել դասվարների, դասավանդող մյուս ուսուցիչների, դպրոցի հոգեբանների և աշակերտական համայնքի համակարգողների հետ
- Համագործակցել դպրոցի մանկավարժական, աշակերտական, ծնողական համայնքների հետ աշակերտների կրթության և դաստիարակության հարցում
- Մասնակցել աշակերտական նախագծերի ընթացիկ աշխատանքներին, դրանց պաշտպանությանը և գնահատմանը
- Դպրոցում ընդունված կարգով և նախատեսված ժամկետներում ներկայացնել հաշվետվություն աշակերտների ուսումնական առաջընթացի, հմտությունների, կարողությունների ու պահվածքի վերաբերյալ
- Գրանցել աշակերտների հաճախումները համապատասխան հարթակներում, փաստաթղթերում, անհրաժեշտության դեպքում վերահսկել
- Կազմել դասավանդվող առարկայի նկարագիրն ըստ դպրոցի սահմանած ձևաչափի, կազմել դասապլաններ, նախապատրաստել դասերը և ուսումնառությունն իրականացնել ուսումնական ծրագրին համապատասխան, կազմել տարաբնույթ առաջադրանքներ, կատարել ձևավորող և ամփոփիչ գնահատում
- Տրամադրել դասավանդման հետ կապված անհրաժեշտ տեղեկույթ ու խորհրդատվություն դպրոցի նշանակած պատասխանատու անձին
- Լիարժեք մասնակցել առարկայախմբի քննարկումներին, դպրոցի ուսուցչական և աշխատանքային խորհրդակցություններին
- Ուսումնասիրել, վերանայել ու մշակել առարկայական ծրագրերի բովանդակությունը, մասնակցել գնահատման քաղաքականության և ընթացակարգերի քննարկմանն ու մշակմանը
- Մասնակցել փոխադարձ դասալսումների՝ փորձի փոխանակման նպատակով, տալ և ստանալ դիտարկումներ և մեկնաբանություններ աշխատանքի վերաբերյալ:
- Մասնակցել կրթական տարբեր դասընթացների, շարունակաբար զբաղվել մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմամբ, կատարել սեփական փորձառության հետազոտություններ
- Ներգրավվել դպրոցում տարբեր հերթապահությունների, արտադասարանական միջոցառումների մեջ
- Մասնակցել դպրոցի համայնքային միջոցառումների կազմակերպմանը, դպրոցական համաժողովներին, դպրոցի ընդհանուր հանդիպումներին, ծնողական հանդիպումներին, ունենալ սեփական ներդրումը դպրոցի համայնքաշինության գործընթացում
- Հետևել դպրոցի կանոնադրական ու ներքին իրավական փաստաթղթերին և աշխատանքը կազմակերպել ըստ այդ փաստաթղթերով սահմանված պահանջների

Մասնագիտական և անձնային պահանջներ

- 1-9-րդ դասարաններում դասավանդելու համար՝ բակալավրի աստիճան «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտացմամբ:
- 10-12-րդ դասարաններում բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտացմամբ:

- Մանկավարժի որակավորում:
- Ռուսերենով գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ:
- Անգլերենի իմացություն
- Ուսումնական հաստատությունում ռուսերեն դասավանդելու (մասնավորապես՝ 8-18 տարեկան աշակերտների հետ աշխատելու) առնվազն մեկ տարվա փորձ:
- Առարկայական պատշաճ գիտելիքներ և դասավանդման գործնական հմտություններ:
- Դասարանի կառավարման գիտելիքներ և հմտություններ:
- Սեփական մանկավարժական փորձառությունը վերլուծելու և գնահատելու կարողություններ:
- Նորարար և ստեղծագործական մոտեցում:
- Արագ արձագանքելու և միաժամանակ մի քանի անելիքի վրա կենտրոնանալու կարողություն:
- Համբերատարության, հուզական բանականության, վերլուծական մտածելակերպի պատշաճ դրսևորումներ:
- Համակարգչային հմտություններ և ուսումնառության մեջ արդի տեխնոլոգիաների կիրառում:
- Ժամանակի կառավարման հմտություններ:

Դիմելու կարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուներին խնդրում ենք ուղարկել ինքնակենսագրականը vacancy@aybschool.am հասցեին:

Ինչպես նաև խնդրում ենք նամակի թեմայի (subject) դաշտում պարտադիր նշել՝ **ռուսերենի ուսուցիչ_անուն-ազգանուն**:

Նախնական ընտրություն անցած թեկնածուները կիրավիրվեն թեստ գրելու և փորձնական դաս վարելու:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ մայիսի 25, 2021 թ.:

Մեր մասին

Մենք ձգտում ենք Հայաստանը դարձնել միջազգային չափանիշներին համապատասխան հայալեզու կրթական նոր ու որակյալ հարթակ ապահովող երկիր:

«Այբ» դպրոցը բյուրեղացում է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում՝ ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալու 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: